

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Ընկերության հետագա զարգացումը հիմնված է հեռահաղորդակցական և թվային ենթակառուցվածքների շարունակական արդիականացման, հաճախորդակենտրոն մոտեցման խորացման, ծառայությունների դիվերսիֆիկացման, կառավարման արդյունավետության բարձրացման և մարդկային կապիտալի զարգացման վրա:

Այս նպատակներին հասնելու համար, 2026 թվականի 1-ին եռամսյակում Ընկերությունը շարունակելու է ներդրումներ կատարել ռազմավարական տեսանկյունից կարևորագույն ուղղությունների զարգացման մեջ: Ընկերությունը շարունակում է իր ռազմավարական առաջնահերթություններից մեկը համարել ֆիքսված և շարժական կապի ենթակառուցվածքների զարգացումն ու արդիականացումը՝ ապահովելով կապի բարձր որակ, լայն ծածկույթ և ցանցի հուսալիություն ամբողջ Հայաստանի տարածքում: Առաջիկա տարիներին Ընկերությունը նախատեսում է շարունակել բջջային ցանցի արդիականացումը Երևանում, մարզերում և միջպետական ճանապարհներին՝ ապահովելով անխափան կապ նաև շարժման ընթացքում:

Ընկերության ռազմավարական զարգացման կարևոր ուղղություններից է թվային ծառայությունների էկոհամակարգի ձևավորումը և ընդլայնումը, որը միավորում է հեռահաղորդակցության, էներգետիկայի և թվային բովանդակության ոլորտները:

Այս շրջանակում առանցքային դեր ունեն հետևյալ հարթակները՝

- **My Team**՝ որպես ինքնասպասարկման հիմնական թվային գործիք, որը ապահովում է ծառայությունների կառավարում, վճարումներ և հաճախորդների հետ հաղորդակցություն,
- **Team Energy**՝ որպես նորարար նախագիծ, որը նպաստում է էլեկտրական տրանսպորտի զարգացմանը,
- **TeamTV**՝ թվային հեռուստատեսության հարթակ, որը ապահովում է բազմաժանր բովանդակության հասանելիություն տարբեր սարքերով:

Այս ուղղությունը նպատակ ունի՝

- բարձրացնել հաճախորդների ներգրավվածությունը,
- ստեղծել լրացուցիչ արժեք,

ԿՑՎՈՍ Է ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՅՄԱՆԸ

- դիվերսիֆիկացնել եկամտի աղբյուրները և նվազեցնել կախվածությունը ավանդական հեռահաղորդակցության ծառայություններից:

Շրջակա միջավայրի պահպանությունը հանդիսանում է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կայուն զարգացման ռազմավարության կարևոր բաղադրիչներից: Ընկերությունը նպատակ է դրել նվազեցնել իր Շրջանակ 1 և 2, ինչպես նաև Շրջանակ 3 ջերմոցային գազերի արտանետումները 40%-ով մինչև 2029 թվականը: Այս համատեքստում Ընկերությունն անցում է կատարում վերջին սերնդի էներգախնայող տեխնոլոգիաների, ինչպես նաև առաջնությունը տալիս վերականգնվող էներգիայի աղբյուրներին և էկոլոգիական սերտիֆիկացում ունեցող սարքավորումներին:

Ընկերության երկարաժամկետ հաջողությունը պայմանավորված է նաև մարդկային կապիտալի զարգացմամբ:

Ընկերությունը շարունակելու է ձևավորել բարձր արդյունավետություն ունեցող, համագործակցային և նորարարական թիմային մշակույթ, որտեղ յուրաքանչյուր աշխատակից ունի զարգացման և առաջխաղացման հնարավորություն:

Վերոնշյալ արդյունքների հիման վրա, Ընկերությունը նախատեսում է առաջիկա տարիներին՝

- շարունակել լայնածավալ ներդրումները հեռահաղորդակցական ենթակառուցվածքներում,
- ընդլայնել 5G և NGN ցանցերի հասանելիությունը,
- զարգացնել թվային ծառայությունների ինտեգրված էկոհամակարգը,
- բարձրացնել հաճախորդների փորձառության մակարդակը և բրենդի ճանաչելիությունը
- ապահովել ֆինանսական և գործառնական կայուն աճ,
- խորացնել ESG և կայուն զարգացման նախաձեռնությունները,
- շարունակել ներդրումները մարդկային կապիտալի զարգացման մեջ:

Այս ռազմավարական ուղղությունները նպատակ ունեն ապահովելու Ընկերության երկարաժամկետ մրցունակությունը, շուկայում դիրքերի ամրապնդումը և ընդլայնումը, ինչպես նաև կայուն դրամական հոսքերի ձևավորումը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իմ լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

Հայկ Եսայան

Գլխավոր տնօրեն
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
Մայիս 20, 2026թ.

